

28 Յուլիս 2022

Տիկին Ալին Ճիգմեճեան
Գահիրե, Եգիպտոս

Ազնի Տիկին Ճիգմեճեան,


Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ընտանիքին համար, նաեւ մեզի համար անձնապէս, ձեր սիրելի ամուսնոյն Վիգէնին անժամանակ մահը, խոր վիշտ եւ ցաւ կը պատճառէ, ոչ միայն սիրելի անձի մը, ազնուական բնատրութեամբ բարեկամի մը, մարդասէր եւ ծառայասէր ազգայինի մը մեկնումով, այլեւ Եգիպտոսի մեր պատմական համայնքին համար, ազգային, քաղաքական, համայնքային եւ երիտասարդական շարժումներու առաջնորդ, ժրաջան, բազմակողմանի արժանիքներով օժտուած օրինակելի ղեկավարի մը վաղահաս շիջումով:

Մարդկայնօրէն դժուար է անշուշտ հաշտուիլ դառն իրականութեան հետ, երբ կենսախինդ, գուարթախոհ, յուսալի ու խանդավառ միութենական գործակից մը, գործիչ մը, որուն հետ բազմաթիւ եւ յաճախակի հանդիպումներու եւ համագումարներու տարբեր առիթներով, տակաւին վերջերս Լիբանանի մէջ, յիշատակելի պահեր ապրած ենք, մտահոգութիւններ բաժնած ենք եւ ապագայի յոյսեր փայփայած ենք, անսպասելիօրէն կը հեռանայ կեանքէն, վշտահար սիրելիներ, հարազատներ եւ բարեկամներ ձգելով իր ետին:

Եգիպտոսի մեր շրջանակը, ազգային թեմական մարմինները եւ Եգիպտոսի բժշկական, երիտասարդական, մարզական եւ լրատուական լայն համայնքը ընդհանրապէս, անկասկած մեծ բացի մը զգացողութիւնը կ'ապրին այսօր, Վիգէնին մեկնումով: Բայց եւ այնպէս, երբ կ'անդրադառնանք այն փայլուն դրոշմին, որ ան կը ձգէ իր օրինակելի վարքագիծով դաստիարակուած երիտասարդութեան եւ միութենանուէր գործունէութեան ազդեցութեամբ ծառայասիրութեան մղուած անդամներու մեծ թիւով, կը գիտակցինք, թէ ան կը շարունակէ ապրիլ իր պայծառ յիշատակներով, լուստեսութիւն եւ յարատեւելու ոգի ներշնչելով զինք սիրողներու եւ յարգողներու խիտ շարքերուն:

Այս տխուր առիթով, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունով եւ անձնապէս, մեր խորագգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք ձեզի, ձեր դուստրերուն՝ Ասբէին եւ Մանէին, ինչպէս նաեւ ձեր ընտանիքին, հարազատներուն եւ սիրելիներուն: Աստուած լուսաւորէ Վիգէնի ազնիւ հոգին եւ օրհնեալ ըլլայ իր անթառամ յիշատակը:

Վշտակցութեամբ՝



Պերճ Սեդրակեան
Նախագահ